
ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԻՇԽԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՐԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության հետաքրքիր և կարևոր փուլերից է Կիլիկիայի հայկական թագավորությունը, որում առանձնահատուկ տեղ է գրավում հայոց արքա Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանը: Հայտնի փաստ է, որ Լևոնը իր բացառիկ տաղանդի և ընդունակությունների շնորհիվ կարողացավ Կիլիկիայի հայկական իշխանությունը վերածել թագավորության՝ գործելով բազմաթիվ սխրանքներ, և պատահական չէ, որ նա համարվում է հայոց պատմության տասը լավագույն արքաներից մեկը: Ու թեև միջնադարյան պատմիչները փորձել են նրա գործունեության հնարավորինս ամբողջական պատմությունը ներկայացնել, այնուամենայնիվ մինչև այժմ էլ որոշ դրվագներ ու մի շարք կարևոր հարցեր չեն ստացել իրենց պատշաճ գնահատականները:

Ներկա հետազոտությունը նվիրված է Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադիր արքա Լևոն Մեծագործի և Գևորգ իշխանի հարաբերությունների պատմությանը: Իսկ ո՞վ էր Գևորգ իշխանը: Նա Ռուբինյան դինաստիայի ամենակարկառուն և նշանավոր իշխաններից մեկի՝ Սլեհ իշխանապետի որդին էր: Պատմագիտության տեսանկյունից շատ հետաքրքիր է պարզել, թե ինչպիսի հարաբերություններ են եղել հայոց արքայի և Գևորգ իշխանի միջև, և ո՞րն էր այն գլխավոր պատճառը, որ հայոց արքան կատարեց իր կյանքի միզուցե ամենադժան արարքներից մեկը՝ կուրացնելով վերջինիս: Բնական է, որ Լևոն Մեծագործը նման դաժան քայլի դիմելու համար պետք է ունենար բավականին հիմնավոր պատճառ:

Հայտնի է, որ Գևորգ իշխանը Կիլիկիայի հայկական թագավորությունում ճանաչված էր որպես խիզախ ու խելացի երիտասարդ և հարգանք էր վայելում իր շրջապատում:

Նախ տեսնենք, թե այդ մասին ինչ են ասում միջնադարյան պատմիչները: Ցավոք, միջնադարյան սկզբնաղբյուրները այս դեպքի մասին համարյա տեղեկություններ չեն պահպանել, և ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ պատմիչները չեն ցանկացել Լևոն Մեծագործի այդ դաժան արարքի մասին խոսել կամ էլ դրան կարևորություն չեն տվել: Նշյալ դեպքին անդրադարձել են միջնադարյան երկու սկզբնաղբյուրներ: Առաջինը 13-րդ դարի նշանավոր պատմիչ և հայոց սպարապետ Սմբատ Գունդստաբլն էր, ով դեպքերի ժամանակակիցն է եղել և բավականին արժանահավատ սկզբնաղբյուր է: Նա նշում է, որ

Գևորգ իշխանը, որ Մլեհ իշխանապետի ապօրինի որդին էր, բավական մեծ ուժի տեր մարդ, գոռոզ ու անհնազանդ, բայց շատերը սիրում էին նրան ու համախմբվում նրա շուրջը¹: Ինչպես նկատում ենք, պատմիչի տեղեկությունների մեջ կա որոշակի անհամապատասխանություն: Ինչպես կարող էին գոռոզ ու անհնազանդ մարդուն սիրել և համախմբվել նրա շուրջը: Այնուհետև, շարունակելով իր խոսքը, ավելացնում է, որ հայոց արքան կասկածում էր, որ իշխանը առաջին իսկ հարմար պահին կարող էր գրավել իշխանությունը, քանի որ չար մարդիկ այդպես էին արքային տեղեկացրել՝ փորձելով թշնամացնել Գևորգի հետ²: Ճիշտ է, Սմբատ Սպարապետի տեղեկությունները Կիլիկիայի հայոց պետության համար շատ կարևոր էին, սակայն շատ դիպուկ է նկատել հետագոտող Ս. Գրիգորյանը, որ Սմբատը իր Տարեգրքում վատ է խոսում Մլեհի և նրա հետնորդների մասին³: Ինչը կարող էր դրդել Սմբատին, որ նման կեցվածք ընդուներ: Կարծում ենք, որ դա հիմնականում պայմանավորված է իշխանության համար մղվող պայքարով, որը տվյալ պահին տեղի էր ունենում մի կողմից՝ հայոց արքայի մորեղբոր որդու Կոստանդինի, Սմբատ Սպարապետի հոր, իսկ մյուս կողմից՝ արքայի հորեղբոր որդու՝ Գևորգ իշխանի միջև: Ամենայն հավանականությամբ այդ անձինք լուրջ պայքար էին մղում սպարապետության պաշտոնի համար և լավ էին հասկացել, որ ով դառնար սպարապետ, չէր բացառվում ապագայում կնքվեր հայոց թագավոր: Այս պայքարում հայոց արքան նախապատվությունը տվել է Կոստանդինին: Բացի դրանից, հետաքրքիր է նաև այն փաստը, որ երբ այս դեպքերից քիչ անց Կոստանդինը դառնում է հայոց սպարապետ, Լևոն Մեծագործը նրան է նվիրում Բարձրբերդը, որը Գևորգ իշխանին էր պատկանում: Իհարկե չի բացառվում, որ հենց Կոստանդինն էլ, որ Լևոնի մորեղբոր՝ Վասակի որդին էր, ներքին կարգով գրգռել է Լևոն Մեծագործին Գևորգի դեմ, որ Գևորգ իշխանին հեռացնեն քաղաքական ասպարեզից, և ինքը դառնա հայոց սպարապետ:

Ինչ վերաբերում է Գևորգի՝ ապօրինի զավակ լինելու հանգամանքին, ապա այդ մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում որևէ այլ տեղեկություն չկա:

Կարծում ենք, որ այստեղ կա ինչ-որ մի այլ դրդապատճառ, որի մասին միջնադարյան սկզբնաղբյուրները լռում են:

Հետագոտվող խնդրի մասին որոշակի տեղեկություններ են պարունակվում նաև 13-րդ դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններում: Օրինակ՝ վերը նշյալ խնդրին անդրադարձել է գրիչ Գրիգորը, ով, սակայն, նոր, էական տեղեկություն մեզ չի հաղորդում և հիմնականում կրկնում է Սմբատ Գունդստաբլի հաղորդած տեղեկությունները⁴:

¹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 216-217:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս Գրիգորյան Ս. Коронационный список летописи Смбага Гундстабля: Сируи, владетель Симанаклы // <http://deusvult.ru> կայքից:

⁴ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ժգ դար», կազմեց Ա. Մաթևոսյանը, Եր., 1986, էջ 88:

Ո՞րն էր այն գլխավոր պատճառը, որը ստիպեց Լևոն Մեծագործին կատարելու նման արարք:

Եթե վստահենք վերը նշված սկզբնաղբյուրներին, ապա պետք է կարծել, որ հայոց արքան նման դաժան արարք է կատարել որոշ ամբարտավան մարդկանց հաղորդած կեղծ տեղեկության հիման վրա: Կարծում ենք, որ դա իրականում բավարար չէր կարող լինել նման արարք կատարելու համար: Թեև ժամանակին Լևոն Մեծագործի հայրը և Մլեհ իշխանապետը ունեցել են որոշակի խնդիրներ, և հետագայում էլ Լևոնի մայրը, վախենալով Մլեհի վրեժխնդրությունից, իր երեխաներին տարել է եղբոր՝ Բակուրան իշխանի Կոպիտառ բերդը⁵, բայց չենք կարծում, որ դա էր առիթը, քանի որ եթե վրեժխնդրության ցանկություն լիներ, ապա Լևոնը իշխանության գալուց անմիջապես հետո կարող էր վրեժխնդիր լինել հորեղբոր որդուց, այլ ոչ թե սպասեր քսան տարուց ավելի: Եվ բացի դրանից, այդ ժամանակաշրջանում Լևոն Մեծագործի դիրքերը բավականին ամուր էին, և դժվար թե որևէ իշխան, այդ թվում և Գևորգը, կարողանար նրանից խլել իր իսկ ստեղծած թագավորությունը: Մյուս կողմից էլ՝ Լևոն Մեծագործը այն միամիտ անձնավորությունը չէր, որ հեշտությամբ հավատար բամբասանքներին:

Այժմ տեսնենք, թե ինչ տեսակետներ կան ժամանակակից գիտական գրականության մեջ:

Հետազոտողները, հավանաբար հաշվի առնելով միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունների սղությունը, շատ քիչ են անդրադարձել նշված խնդրին:

Այսպես, առաջին անգամ այս խնդրին անդրադարձել է հայագիտության նշանավոր դեմքերից մեկը՝ Ղ. Ալիշանը, որի կարծիքով արքան նման արարք կատարեց, քանի որ կասկածում էր, թե Գևորգը սպասում է թագավորական իշխանությունը գրավելու հարմար առիթի⁶: Ճիշտ է, Ալիշանը հղում չի կատարում, թե ինչ սկզբնաղբյուրից է օգտվել, բայց ամենայն հավանականությամբ՝ Սմբատի հաղորդած տեղեկությունից: Ականավոր հայագետի տեսակետը շատ տրամաբանական է, սակայն չի հիմնավորվում որևէ այլ փաստարկով: Եթե Գևորգ իշխանը ցանկանար գրավել իշխանությունը, ապա դժվար թե դա վրիպեր Սմբատի ուշադրությունից:

Մյուս հետազոտողը, ով անդրադարձել է այս խնդրին, հայ եկեղեցու պատմության անգուգական հետազոտող Մաղաքիա Օրմանյանն է: Նա կարծիք է հայտնում, որ Լևոն Մեծագործը այդ քայլին է դիմել, որպեսզի իր հռչակած Ռուբեն-Ռայմոնդը դառնա Կիլիկիայի հայոց գահի միակ ժառանգորդը⁷: Եթե հավատալու լինենք Մ. Օրմանյանի առաջ քա-

⁵ Կոպիտառ բերդը Կիլիկյան Հայաստանի հին և նշանավոր բերդերից է՝ դեպի Գամբաց աշխարհը տանող ճանապարհի վրա (տե՛ս **Մ. Յ. Հովհաննիսյան**, Կիլիկյան Հայաստանի բերդերը և բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 189):

⁶ Տե՛ս **Ղ. Ալիշան**, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 509-510:

⁷ Տե՛ս **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1851:

շած տեսակետին, ապա պետք է կարծել, որ հայոց արքան նման արարք է կատարել Ռուբեն-Ռայմոնդի ճանապարհը դեպի թագը ազատելու համար: Մ. Օրմանյանի կարծիքը կարող է ճշմարիտ լինել, քանի որ մոտ է առողջ տրամաբանությանը. Գևորգ իշխանը՝ որպես Ռուբինյան տոհմի շառավիղ, միանգամայն օրինական ձևով հայոց արքայի մահվանից հետո կարող էր հավակնել մասնակցելու Կիլիկիայի հայոց գահի համար մղվող պայքարին, ինչն էլ քաջ գիտակցելով՝ խիստ դեմ է եղել հայոց արքան: Չի բացառվում, որ նա հետագայում կարող էր պայքարել Ռուբինյանների գահին տիրելու համար: Մ. Օրմանյանի տեսակետը պաշտպանում է Լ. Տեր-Պետրոսյանը: Նա նույնպես կարծիք է հայտնում, որ այդ արարքի նպատակը Ռուբեն-Ռայմոնդի ճանապարհը հարթելն էր, ու նա դա կատարեց բյուզանդական ավանդույթով⁸: Ապա ավելացնում է, որ Լևոն Մեծագործը այն անձնավորությունը չէր, որ թեթևամտորեն անտեսեր սեփական գահին սպառնացող ամենաչնչին վտանգն անգամ⁹: Դա է վկայում հենց Սմբատ Սպարապետի այն տեղեկությունը, որ Գևորգ իշխանը բազմաթիվ կողմնակիցներ ուներ¹⁰: Չի բացառվում, որ Գևորգի կողմնակիցները չեն ցանկացել, որ հայոց արքան իր գահը փոխանցի ոչ Ռուբինյան տոհմի ներկայացուցչին՝ մտածելով, որ վերջինս կարող է ապագայում թալանել հայոց թագավորությունը և այն կործանել:

Ուսումնասիրողներից Հ. Տեր-Ղազարյանը, խոսելով Գևորգ իշխանի մասին, նախ նշում է, որ վերջինս նոր շինություններով ճոխացրել է Մեծքարի վանքը, բայց Լևոն Մեծագործի կողմից զրպարտության ենթարկվելով՝ կուրացվել է և բանտարկվել Կոպիտառի բանտում¹¹:

Հարց է առաջանում, եթե Գևորգը խիզախ և բարի անձնավորություն էր, առատաձեռն, ապա ինչո՞ւ Լևոն Մեծագործը չցանկացավ գահը թողնել նրան: Իհարկե դժվար է միանշանակ գնահատական տալ, բայց ամենայն հավանականությամբ հայոց արքան, գահը թողնելով Ռուբեն-Ռայմոնդին, նպատակ է ունեցել նրա միջոցով Անտիոքի դքսությունը միավորել Կիլիկիայի հայկական թագավորությանը: Դա, իհարկե, լավ մտահղացում էր, սակայն հայոց արքան պետք է գիտակցեր, որ դա չափազանց դժվար իրականացվելիք խնդիր էր: Եթե Լևոն Մեծագործի նման լուրջ անձնավորությունը և փորձառու քաղաքական գործիչը տարիների ընթացքում չէր կարողացել վերջնականապես լուծել Անտիոքի խնդիրը, ապա անփորձ և երիտասարդ Ռուբեն-Ռայմոնդի՝ հայոց գահին բարձրանալուց հետո այդ հարցը ավելի մշուշոտ էր դառնալու:

Իմ կարծիքով, քանի որ Լևոն Մեծագործը չունեի արու գավակ, շատ ավելի ճիշտ կլիներ՝ իրենից հետո գահը թողնել հենց Գևորգ իշխանին, ով Ռուբինյան դինաստիայից էր, և որի հայրը ժամանակին բավականին

⁸ Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Եր., 2007, էջ 220:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 216-217:

¹¹ Տե՛ս Հ. Տեր-Ղազարյան, Հայկական Կիլիկիա, Տեղագրություն, Անթիլիաս, 1966, էջ 55:

գործ էր կատարել Կիլիկիայի հայոց պետության ամրապնդման և զորեղացման համար:

Ի վերջո հանգում ենք այն համոզման, որ հայոց արքայի կողմից Գևորգ իշխանին կուրացնելը և քաղաքական ասպարեզից հեռացնելը հիմնականում կարող էին ունենալ երկու դրդապատճառ:

1. Այդ արարքի հիմքում հնարավոր է լիներ հայոց արքայի հորեղբոր որդու՝ Գևորգ իշխանի և մորեղբոր որդու՝ Կոստանդինի միջև պայքարը սպարապետության պաշտոնի համար: Այդ է վկայում հենց այն փաստը, որ Գևորգ իշխանին կուրացնելուց քիչ անց Կոստանդինը նշանակվում է Կիլիկիայի հայոց թագավորության սպարապետ:

2. Ոչ պակաս հավանական է նաև այն տարբերակը, որ հայոց արքայի արարքի հիմքում ընկած էր Ռուբեն-Ռայմոնդի ճանապարհը ազատելու խնդիրը:

Եվ միայն տարիներ անց հայոց արքան, հասկանալով, որ մեղադրանքները Գևորգ իշխանի հասցեին սխալ և անհիմն էին, բանտից ազատում է նրան և վերադարձնում Մեծքարը, որտեղ էլ Գևորգ իշխանը վախճանվում է ու թաղվում¹²:

Այժմ կցանկանայինք ճշտել, թե մոտավորապես որ թվականին է կատարվել այս քայլը: Այս հարցում էլ մենք ունենք ընդամենը երկու սկզբնաղբյուր: Առաջինը՝ Սմբատ Սպարապետի Տարեգիրքն է, իսկ երկրորդը՝ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները: Այսպես, ըստ գրիչ Գրիգորի՝ դեպքը տեղի է ունեցել «ի թուականին հայոց ի ՈՏԷ», որը տոմարագիտական հաշվարկներով դրվում է մոտավորապես 1208-1209 թթ. մեջ¹³: Վերը նշված դեպքին որոշակի անդրադարձ է կատարել նաև Սմբատ Սպարապետը, համաձայն որի՝ այն տեղի է ունեցել մոտավորապես նույն շրջանում¹⁴: Մյուս սկզբնաղբյուրները այդ մասին լռում են:

Ինչ վերաբերում է ժամանակակից գիտական գրականությանը, ապա պետք է նշել, որ Ս. Բոռնագյանը, հիմնվելով Երուսաղեմի մայր ցուցակ ձեռագրացի հայտնած տեղեկության վրա, կարծիք է հայտնում, որ Լևոն Մեծագործը հոգուտ արքունիքի բռնագրավեց Մեծքարում գտնվող Գևորգ իշխանի տիրույթները 1208 թվականին¹⁵: Եվ քանի որ նշյալ տեսակետը համընկնում է նաև Սմբատ Սպարապետի և հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկի հեղինակի հայտնած տեղեկությանը, ուստի կարելի է կարծել, որ այդ իրադարձությունը հնարավոր է՝ տեղի է ունեցել հենց նույն թվականին, այսինքն՝ 1208 թ.:

Ամեն դեպքում պետք է նշել, որ թեև Լևոն արքան իր գործունեությամբ

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար», էջ 88:

¹⁴ Տե՛ս **Սմբատ Սպարապետ**, նշվ. աշխ., էջ 216-217:

¹⁵ Տե՛ս **Ս. Մյուրմեյյան**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի, հ. 1, Վենետիկ, 1948, էջ 314-316: Այդ մասին տե՛ս նաև **Ս. Բոռնագյան**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Եր., 1973, էջ 176:

յան ամբողջ ընթացքում մի շարք կարևոր հարցեր է լուծել թե՛ Կիլիկիայի պետության ստեղծման և թե՛ երկրի ներքին ու արտաքին բնագավառներում, այնուամենայնիվ Ռուբինյան դինաստիայի արական սեռի վերջին անդամին՝ Գևորգ իշխանին, կուրացնելը և քաղաքական ասպարեզից հեռացնելը սխալ և անհիմն քայլ էր: Շատ ավելի ճիշտ կլիներ, եթե նա իր թագավորությունը թողներ իր հորեղբոր որդուն, որը, օրենքի բոլոր կանոնների համաձայն, իրավունք ուներ բազմելու հայոց գահին և շարունակելու Ռուբինյան տոհմի ավանդույթները, այլ ոչ թե օտարամոլ մի անձնավորության ու մասնավորապես Ռուբեն-Ռայմոնդին, ով հետագայում առաջին իսկ հարմար պահին փորձում էր օգտվել առիթից և թակարդը գցել հայոց արքային: Ինչ վերաբերում է Զաբել թագուհու խնդրին, ապա պետք է նշել, որ արքան, երեք խնամակալներ նշանակելով, գործնականում չէր կարող պատկերացնել, թե ով է իրենից հետո ժառանգելու հայոց թագավորական գահը, և ինչ է ապաստելու հայկական պետությանը:

Բանալի բառեր – *Կիլիկիա, Լևոն Մեծագործ, թագավորություն, Գևորգ իշխան, հետազոտող, աղբյուր, Միշտ Սպարապետ, Կոստանդին*

ARAM OGANISYAN – *Из истории взаимоотношений Левона Великого и князя Геворга.* – Работа посвящена отношениям основателя Киликийского армянского царства Левона Великого с князем Геворгом. Впервые в историографии на основе средневековых источников и научной литературы предпринята попытка мотивировать предвзятость и жестокость царя в отношении Геворга, сына великого князя Млеха. Кроме того, речь идет о вероятной причастности к этой коллизии спарапета Костандина и о ситуации, в которой оказалось Киликийское царство после смерти Левона. Доказано, что отношение царя к князю Геворгу обуславливалось борьбой двух высокопоставленных лиц за должность главнокомандующего (спарапета).

Ключевые слова: *Киликия, Левон Великий, князь Геворг, исследователь, источник, Смбат Спарамет, Костандин*

ARAM HOVHANNISYAN – *From the History of the Relationships between Levon Metsagoets and Prince Gevorg.* – The article considers the history of the relationships between Levon Metsagoets, the founder of Cilician Armenia, and Gevorg Prince. Based on the medieval sources and the authentic literature there has been made an attempt to represent the reasons for King's savage disposition towards Gevorg Prince who was Prince Mleh's son. The article also considers Chief Commander Kostandin's role both in that important event and in the situation that was created in the Armenian Kingdom after Levon Metsagoets's death. It is proved in the article that the step taken by the King was based on the fact that two prominent personalities had started struggle for the position of Sparapet or Chief Commander.

Key words: *Cilicia, Levon the Magnificent, kingdom, Prince, Gevorg, researcher, source, Smbat Sparapet (Commander), Constantine*